

ինձ. և ծնողաց իմոց. ամ. հաւրն. իմոյ Իսքանտարի. մօրն. իմոյ Կիււլազին. եղբօրս ազնայուերին. կողակցիս. Մայրամին և հօգևոր զաւակաց իմոց ածատրին. ավէտիսին, և սարգաւարգ Սարգսսին և ամ. ծառայից իմոց»: Այս Աստուածաշունչին և և ը մնացորդաց գրքերն ունին սովորական հայ թարգմանութենէն բոլորովին տարբեր ուրիշ քարգանձարձի մը զոր 1773ին դիտած է Ս. Յակոբի միաբան Սարգիս վրդ. Մալեան Հաճընցին, գրչագիր Աստուածաշունչներուն բաղգատութեան ժամանակ: Սոյն թարգմանութիւնը գտնուեցաւ նաև Ս. Էջմիածնի ձեռագիր Աստուածաշունչներէն մէկուն մէջ (Էջմ. Յուղ. թ. 176) Հասան Ջալալեանց Եղիա վրդ. ի ձեռքով: Բրօֆ. Խալաթեանց 1899 ին այս երկու ձեռագիրներուն թարգմանութիւնը տարբերակներով հրատարակած է:

ԶԻՐԱՔ (ԽՕՁԱ) ԵՒ ՈՐԴԻՔՆ ՄԻՐԱՔ. ՍԱՅԱՐ ԵՒ ՇԻՐԱԶԵԱՆ, ԲԱՂԻՇԵՅԻ.— Հալէպի Ս. Յակոբի վանքին սեփական հոգետան վերի յարկին N^o 6 խուցը շինած են իրենց ծախքով, հետևեալ յիշատակարանին համաձայն.

«Արդ յիշեցէք ի Քս. զԲաղէշցի խոջայ Զիրաք և որդիքն Միրաքն, Սաֆարն և Շիրաղխան. շինեցին զտունս սբ. Եղմյ. յիշատակ թվ. ՌՁ. (= 1631):

ԶՈՒՍՐ ձԻՅԻՐՁԻ ՕԳԼՈՒ ՔՀ.— 1711—1712 թուականներուն, ընտանեօք ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. յիշեալ քահանան գրի առած է իր Ուղեգրութիւնը, որ կը պարունակէ Ս. Յակոբի վանքին նկատմամբ պատմական այլ և այլ տեղեկութիւններ, (Բազմ. 1867-69):

